



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

17 /ապրիլի/ 2019 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու8..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մարգարյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Սեդրակ Ասատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Հայրապետ Մկրտչյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ (սոցիալական աշխատող) Մարիամ Առաքելյանը, ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Արման Հայրապետյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Վարդան Հովհաննիսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 17-ի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2018 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթուղթը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

